

ՀԱՐՑԵՐ

Մարինե Սարգսյան

Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Մեր հետազոտական ծրագրի՝ 16-17-րդ դդ. հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների լեզվական առանձնահատկությունների քննության ընթացքում¹ հանգեցինք նրան, որ Հայ գրքի՝ 1512-1800 թթ. ընդգրկող հայերեն հնատիպ գրքի մատենագիտության² վրա հենվել չենք կարող (այսուհետև այս հրատարակութիւնը կոչում ենք «Հայ գիրք»)։ Այս գրքում առկա հիշատակարանները համեմատելով իրենց սկզբնաղբյուր-գրքերի հետ՝ նկատեցինք մի շարք ոչ ճիշտ ընթերցումներ, տեխնիկական թերություններ, սրանց զուգահեռ կային հիշատակարանների անտեղի կրճատումներ. ընդ որում, կրճատված են ոչ միայն փառատրական հատվածները, այլև՝ երկար թվարկումները, լրացուցիչ տեղեկությունները։ Բացի այս, հնատիպ գրքերում կան հիշատակարաններ, որոնք Մատենագիտության մեջ եղածին չեն համապատասխանում. այսպես՝ «Հայ գրքում» 7-րդ համարը կրող՝ 1565-1566 թթ. Վենետիկում Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած Սաղմոսարանի հիշատակարանը տարբերվում է հնատիպ գրքի հիշատակարանից («Հայ գրքում» ավելորդ են «ընդ հովանեաւ սուրբ Մարկոս աւետարանչին, ի ժամանակ Սիովնի», «գառաջինք և զմիջինք և զվերջինքն», «ԲՃՀԲ. թուխտ է և ամմէնն կոխած է և իսկի գրչի գիր չկայ ի գիրքս. բաւ է» հատվածները)։ Ուստի անհրաժեշտություն առաջացավ կազմել նոր բնագիր, որը զերծ կլիներ վերը նշված թերություններից։

Մեր աշխատանքի դեպքում, բնականաբար, կարևոր և անհրաժեշտ նախապայման է ամբողջական և ճիշտ ընթերցված հիշատակարան ունենալը, զոնե եղածի դեպքում հնարավորինս անսխալ պատկեր ստանալու համար։ Հակառակ դեպքում, «Հայ գրքում» առկա թերություններն աղավաղելով բառային պատկերը՝ կարող էին մեր աշխատանքին սխալ ընթացք տալ։

Համեմատություն-սրբագրությունը կատարել ենք ըստ հնատիպ գրքերի. հնարավորության դեպքում սա արել ենք նույնիսկ այն պարագայում, երբ «Հայ գրքում» մի շարք միավորների համար որպես նկարագրության հիմք նշված են եղել Գարեգին Զարբհանայանի «Պատմություն հայկական տպագրության...»³, «Հայկական մատենագիտություն»⁴, Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն»⁵ և այլոց աշխատությունները, ինչպես նաև՝ «Սիոն»-ում (1967 թ.) լույս տեսած հիշատակարանները։ Այս հնարավորությունը մեզ ընձեռել է Հայաստանի Ազգային գրադարանի կայքում

¹ Այս հնարավորությունը մեզ ընձեռել է մեր ասպիրանտական թեման՝ «Հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն (ԺՁ.-ԺԷ. դդ.)»։

² Հայ գիրքը 1512-1800 թթ., աշխ. Ն. Ոսկանյանի, Բ. Կորկոտյանի, Ա. Մավալյանի, Երևան, 1988, (այսուհետև՝ Հայ գիրքը)։

³ Գ. Զարբհանայան, Պատմություն հայկական տպագրության..., Վենետիկ, 1895։

⁴ Գ. Զարբհանայան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883։

⁵ Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կեանքի, հ. 1, Վենետիկ, 1909, հ. 2, Վենետիկ, 1912։

(www.nla.am) առկա հայերեն հնատիպ գրքերի թվային պատճենները, անհրաժեշտության դեպքում նաև՝ Մատենադարանի գրադարանի հնատիպ գրքերը: Այս առումով անգնահատելի են Ազգային գրադարանի՝ այդ ուղղությամբ կատարած և կատարվող աշխատանքները:

Համեմատության ընթացքում միևնույն բառի տարբեր ընթերցումներ ենք նկատել նույնիսկ երկուսից ավելի հեղինակների ընդօրինակություններում: Օրինակ, երբ որևէ միավորի համար համեմատության հիմք էինք ընդունում հնատիպ գիրքը, և՛ «Հայ գրքում» և՛ Գ. Զարբհանայանի կամ մյուսների վերը նշված աշխատություններում հրատարակված համապատասխան բնագրերում արձանագրում էինք միևնույն բառի մի քանի ընթերցում:

Բնականաբար, այս հանգամանքն անտեսել չէինք կարող, քանզի սխալ ընթերցումները, հիշատակարանների կրճատումները, մեծածավալ հատվածների բացթողումները, տեխնիկական սխալները կհանգեցնեին տվյալ ժամանակաշրջանում գործող լեզվական երևույթների սխալ ընկալման եւ նույնպիսի պատկերման: Հաշվի առնելով այս ամենը՝ կազմել ենք մեր քննության հիմք հիշատակարանների ճշգրտված բնագրեր, որոնք լիովին համապատասխանում են իրենց սկզբնաղբյուր հնատիպ գրքերին եւ ավելի ճշգրիտ են ներկայացնում իրենց ժամանակի լեզվական (հնչյունային, ձևակազմական, բառային և այլն) պատկերը:

Հնատիպ այն գրքերը, որոնք Ազգային գրադարանի կայքէջում չկան, նաև անձամբ ձեռքի տակ չենք ունեցել, չենք տեսել, որպես համեմատության միակ եզր մնացել է «Հայ գրքում» հղված աղբյուրը. այս դեպքում արդեն մեր բնագիրը մնացել է ըստ այդ հղված աղբյուրի՝ նկատի ունենալով, որ ըստ նրա է արվել «Հայ գրքի» նկարագրությունը:

Մի շարք գրքերի նկարագրություններ արված են եղել մանրաժապավեններից և լուսանկարներից: Տեղեկանալով, որ դրանք տարիների հեռավորությունից գրեթե անհնար է դարձել կարդալ, թողեցինք ըստ «Հայ գրքում» եղածի, հակառակ դեպքում կարող էինք սխալ պատկեր ստանալ⁶:

Այժմ անդրադառնանք հիշատակարանների բնագրերի վերարտադրության մեր սկզբունքին. նախօրինակ-բնագիրը կազմել ենք հետևյալ կերպ.

1. Առանձնացրել և գրի ենք առել «Հայ գրքում» հիշատակարան պարունակող բոլոր միավորները⁷՝ նրանց տալով հերթական համարներ, այնուհետև՝ «Հայ գրքում» զբաղեցրած դրանց կարգային համարը, էջը, հնատիպ գրքի վերնագիրն՝ իր անհրաժեշտ տվյալներով (տպարան, տպագրիչ և այլն): Դրանք դասդասել ենք ժամանակագրական կարգով: Վերջում բերել ենք հիշատակարանն իր էջահամարով (եթե, իհարկե, ունի):

2. Բառանջատումները, կետադրությունը և ուղղագրությունը «Հայ գրքում» արված են անհետևողական. երբեմն թողնված է ըստ հիմք-օրինակի⁸, երբեմն էլ արված է ըստ ժամանակաշրջանի ընդունված օրենքների, չնայած որ հեղինակների բնորոշմամբ

⁶ Ի դեպ ցանկալի և ճիշտ կլինի, որ Ազգային գրադարանն արդեն անգործածելի լուսանկարների և ժապավենների փոխարեն աշխատի և ստանա նույն գրքերի թվային տարբերակները:

⁷ Թե Հիշատակարան միավորի ներքո Հայ գրքում առանձնացված է լինչ միավորներ ենք ընդգրկել տե՛ս հետագա շարադրանքում:

⁸ Նատի ունենք այն բնագրերը, որոնք հիմք են հանդիսացել Հայ գրքի հիշատակարանների ստուգման համար՝ ըստ Հայ գրքում նշված հղում-ծանոթագրությունների, բացառությամբ մի քանիսի, որոնք գտել ենք Ազգային գրադարանի կայքէջում:

«պահպանված են ուղղագրությունը, կետադրությունը, նաև վրիպակներն ու սխալները»⁹: Մեր վերարտադրութիւններն արել ենք հայոց լեզվի ներկայումս ընդունված բառանջատման, կետադրության կանոններով:

ա) Ինչպես գիտենք, դեռևս ձեռագիր մատյաններում հիմնականում տեղ խնայելու, և այլ նկատառումներով բառանջատում չի արվել: Վաղ միջնադարից սկսած՝ աստիճանաբար նկատելի են եղել բառերի անջատ գրություններ, թեև որոշ ժամանակ պահպանվել է նաև կցագրությունը: Սկզբնական շրջանում հայերեն տպագիր գրքերն իրենց հիմնական առանձնահատկություններով նմանվել են ձեռագիր մատյաններին: Բացառություն չէր նաև բառանջատումը, որը շատ անկանոն էր, երբեմն հասկանալի, իսկ շատ հաճախ նաև անհասկանալի պատճառներով: Առաջին հայացքից թվում էր, թե նման շեղումներն արված են եղել տեղի խնայողության նպատակով: Սակայն փոքր-ինչ ուշադիր լինելիս նկատում ենք, որ բառերը հաճախ ոչ միայն կից են գրված, այլ երկու (և երբեմն՝ ավելի) բառ միասին գրված լինելուց բացի, նրանցից յուրաքանչյուրը մասերի է բաժանվում բոլորովին անհարկի եւ սխալ տեղում. օրինակ՝ այլևեղև, իթվին, ըստիւրաքանչ իւր, բոլորիցեղականաց, Սպահանաարտա ձայնի և բազում նման օրինակներ, կամ 1513 թ. տպագրված Պատարագատետրը ընդհանրապես բառանջատում չունի, իսկ 1642 թ. Նոր Ջուղայում տպագրված Ժամագրքում էլ բառանջատումը շատ անկանոն է արված և այլն: Նման դեպքերում հարց է առաջանում. տպագրիչն այդ կերպ վարվելով ի՞նչ խնդիր է ցանկացել լուծել. արդյո՞ք տեղի խնայողության խնդիրն է եղել¹⁰, թե՞ չիմացության և անհետևողականության արդյունք է դա: Եթե բառանջատման նման դրսևորումը լինել միայն տողաշարի վերջում, ապա կարելի էր ենթադրել, որ դա արված է տողաչափը պահելու նպատակով, բայց՝ ոչ. դա նկատելի է տողաշարի տարբեր մասերում: Եվ եթե տպագրիչը տարածք խնայելու նպատակ է ունեցել, այդ դեպքում ինչու՞ անհարկի արված բացատները չի օգտագործել ճիշտ տեղում և անհրաժեշտ ձևով: Շատ հաճախ հնատիպ գրքում կից գրություն են ունեցել ի, առ և այլ նախդիրները, օժանդակ բայերը և իրար հետ կապ չունեցող, անջատ գրություն պահանջող բառեր: Կամ գ, ըստ նախդիրները, ներ-, ըն- նախամասնիկները հանդիպում են և՛ կից, և՛ անջատ գրությամբ: Նշենք նաև, որ կան հիշատակարաններ, որտեղ գործում են բառանջատման հստակ կանոններ: Թերևս այս հարցը մնում է անհասկանալի կամ բացատրելի է գրաշարի հմտութեան չափ-մակարդակով:

բ) Կետադրությունը ևս ինչպես հնատիպ գրքերում, այնպես էլ «Հայ գրքում» անկանոն է, շատ հաճախ՝ անտեղի տրոհումներով հագեցած, կամ հակառակը՝ անհրաժեշտ տեղում որևէ կետադրություն չկա:

գ) Ինչ վերաբերում է ուղղագրությանը, ապա հետևել ենք բուն հնատիպ գրքերին, քանի որ նման անկանոնություններն են վեր հանում տվյալ ժամանակաշրջանի լեզվական որակը՝ ցույց տալով մեր բառերի կրած պատմական, անցումային փոփոխությունները, որոնց արձանագրումն ու քննությունն էլ մեր ուսումնասիրության

⁹ Տե՛ս Հայ գիրքը... , էջ XVII:

¹⁰ Շին մատյաններում, ինչպես և արձանագրություններում բառանջատում չանելը պայմանավորված էր նաև գաղտնիությամբ՝ ծածկագրությամբ. դրա համար երբեմն մատյաններում, իսկ ավելի հաճախ արձանագրություններում գործածվում էր նաև փակագրությունը:

առանցքն ու հենքն է: Որպես այլընթերցում՝ տողատակում հղել ենք գլխավորապես «Հայ գրքի» շեղում-սխալները:

1. Մեծատառի գործածությունը և՛ հնատիպ գրքերում, և՛ «Հայ գրքում» անկանոն է, նույնիսկ վերջակետից հետո եղած դիրքում: Այստեղ ևս առաջնորդվել ենք արդի հայերենի ընդունված կանոններով, բացառությամբ ամսանունների. պատճառն ըստ ավանդույթի՝ հին հայոց, նաև՝ այլ ազգերի տոմարների ամսանունները մեծատառով գրելն է:

2. Մեր բնագրի վերարտադրության ժամանակ խնդրահարույց էր նաև **և** (**Եւ**, **ևւ**)-ի գրության հարցը, քանի որ այն հանդիպում էր թե՛ միանիշ եւ թե՛ երկնիշ ձևով՝ և՛ **և**-ով, և՛ **ևւ**-ով, և՛ **Եւ**-ով: Համեմատության համար հիմք եղած տարբերակներում բոլոր վերջակետերից հետո հանդիպում էր **Եւ**՝ անկախ նրանից, այդտեղ վերջակետի կարի՞ք կար, թե՞ ոչ: Մեր տարբերակում **Եւ** գրել ենք միայն վերջակետից հետո, մնացած բոլոր դեպքերում գրել ենք **և**: Այնտեղ, որտեղ բառամիջում հանդիպել ենք **և** և **ևւ**, պահպանել ենք:

3. Տողադարձի ժամանակ հանդիպող վանկարար **ը** տառը բոլոր դեպքերում անտեսել ենք (օր. ըգ-Գրիգոր = գԳրիգոր, ըգ-կենդանիս = գկենդանիս, անըս-պառ = անսպառ, ըշ-տեմարանաց = շտեմարանաց, ըս-տորակայեալս = ստորակայեալս):

4. Համառոտագրված՝ «պատիի» () նշանով բառերը, ի տարբերություն «Հայ գրքի», գրել ենք ամբողջական՝ առանց վերականգնման որևէ լրացուցիչ նշանի:

5. Բոլոր այն հատվածները, որոնք բացակայում էին «Հայ գրքում», մեր կազմած օրինակում հավելել ենք՝ առնելով ուղղանկյուն փակագծերի մեջ, իսկ «Հայ գրքում» տեղ գտած ավելորդ հատվածները պարզապես դուրս ենք թողել:

Մեր բնագրերում բացի «Հայ գրքում» գրված Յիշատակարան միավորից ներառել ենք նաև Հիշատակություն, Հիշատակագրություն, Մաղթանք, Առաջաբան, Առ ընթերցողս, Ծանուցում... միավորները, որոնք հիշատակարանային բնույթ ունեն: Երբեմն Ծանուցման հատվածները «Հայ գրքի» կազմողները համարել են հիշատակարան, երբեմն՝ ոչ. հաշվի առնելով այս երկվությունը, ինչպես նաև այն, որ դրանց հեղինակը նույն անձն է՝ տպագրիչը, և ժամանակաշրջանն էլ նույնն է, բոլոր նման հատվածները մուծել ենք մեր բնագրի մեջ: Բացի այս, հայերեն հնատիպ գրքերով զբաղվող այլ անհատներ ևս այդ միավորների մի մասը համարել են հիշատակարան: Ավելին՝ բովանդակային ընդհանրություն կա նաև վերը թվարկած միավորների և հիշատակարանի միջև. մեր նման մոտեցումը կարող ենք բացատրել նաև այլ փաստերով՝

ա. «Հայ գրքի» կազմողների առանձնացրած Հիշատակություն, Հիշատակագրություն միավորները կարծեք թե Հիշատակարան մեծ միավորի առանձին փոքրիկ հատվածներ լինեն, իսկ Մաղթանքը նույն Հիշատակարան մեծ միավորի վերջին հատվածի նմանությունն ունի, որտեղ տպագրիչը խնդրում է հիշել իրեն և իր հարազատներին: Հետևաբար, սրանք որպես առանձին միավոր դիտել և հիշատակարանների շարքից դուրս թողնել ճիշտ չէր լինի.

բ. Ինչ վերաբերում է Առաջաբան, Առ ընթերցողս, Ծանուցում... խորագրերով միավորներին, ապա սրանք ևս անկարելի էր անտեսել՝ հաշվի առնելով նախ բովանդակային ընդհանրությունը հիշատակարանի հետ և, ապա այն հանգամանքը, որ

ձեռագիր մատյանների ստեղծման սկզբնական շրջանում հիշատակարանները, որպես այդպիսին, եղել են նաև նյութի սկզբում՝ խորագրում կամ առաջաբանում¹¹: Իսկ մենք գիտենք, որ հնատիպ գիրքը, հատկապես սկզբնական շրջանում, իր կառուցվածքով և նույնիսկ տառաձևերի ընտրությամբ, մանրանկարչությամբ նմանվում էր ձեռագիր մատյանին:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր հանգամանքները, ինչպես նաև չբացատրելով վերջին քառորդ դարում նոր գրքեր գտնված լինելու փաստը, կարծում ենք անհրաժեշտ է ունենալ հայերեն հնատիպ գրքի մի նոր՝ առավել ամբողջական, մանրամասն ու ճշգրիտ նկարագրություն պարունակող մատենագիտություն՝ նախապես մշակելով և ճշտելով նկարագրման սկզբունքը, միգուցե այքի առաջ ունենալով նաև ձեռագրերի նկարագրության փորձը: Ինչ վերաբերում է հիշատակարաններին, կարծում ենք, պետք է «Հայ գրքում» արված խիստ սահմանափակումները վերանայել և մշակել հիշատակարանը մյուս նյութերից տարբերելու ընդհանուր սկզբունք, ինչը, կարծում ենք, մասամբ արել ենք: Միաժամանակ կարելի է անդրադառնալ նաև հետագայում արված գրառումներին՝ հիշատակագրություններին:

Այսպիսով՝ հայ հնատիպ գրքի մատենագիտության վերահրատարակումն պետք է արվի համալիր մոտեցումով՝ եղած սկզբունքների վերանայումով և առաջարկվող նոր սկզբունքների քննությամբ և ընդունումով:

¹¹ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, էջ 12-15: Չնայած, որ Ե.-Ձ. դդ. մեզ որևէ ձեռագիր չի հասել, այնուամենայնիվ, կարծում ենք, որ սրանց զուգահեռ այդ դարերի հայերեն ձեռագիր մատյանները ևս ունեցել են գրված հիշատակարաններ: